# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՍՏԱՆԻ» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 28 - 29 (16326) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 29 ԱՊՐԻԼԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵՏՐԻ


## 2015 ԹՎԱԿԱՆ ԱՊՐԻԼԻ 24. ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԲԱՐՁՈՒՆՔՈՒՄ ՈԳԵԿՈՉԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

### ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԷՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԽԽՈՍՆԱԿ ՄԱՆԱՆԱ ԿՈԲԱԽԻՁԵԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ



*Ապրիլի 24-ին Երեւանում, Ծիծեռնակաբերդի բարձունքում, «Հիշում եմ եւ պահանջում» կոչով անցկացվեց հիշատակի արարողություն: Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցելու համար Հայաստան էին ժամանել 60 երկրի պաշտոնական պատվիրակություններ, որոնցից 4-ը՝ նախագահների մակարդակով:*

Արարողությանը մասնակցեց նաեւ Վրաստանի պատվիրակությունը՝ խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Մանանա Կոբախիձեի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը, Սամվել Պետրոսյանը, Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի հոգեւոր համալսարանի ռեկտոր Սերգո Վարդոսանիձեն, Վրաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Լաշա Բաքրաձեն, Ախալքալաքի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների վարչության նախագահներ էդուարդ Աղասարյանը եւ Գագիկ Կարսլյանը, սակրե-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## «ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԳԼՈԲԱԼ ՖՈՐՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ



*Երեւանում ապրիլի 22-23-ը անցկացվեց «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորում, որին մասնակցեց ավելի քան 600 մասնակից՝ մոտ հինգ տասնյակ երկրներից: Ֆորումում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:*

Ֆորումին ելույթ ունեցան Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, Հայաստանի արտաքին գործերի նախարար էդվարդ Նալբանդյանը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղար

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

Վրաստանի պատվիրակության ղեկավար, խորհրդարանի առաջին փոխխոսնակ Մանանա Կոբախիձեն, 2015 թ.-ի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում վրաց պետության եւ ժողովրդի կողմից, ցավակցությունը հայտնեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին եւ Հայաստանի առաջին տիկին Ռիտա Սարգսյանին Հայոց ցեղասպանության զոհերի ոգեկոչման արարողությանը:



ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄՆ Է»



*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Կախեթիի, Մցխեթա-Թիանեթիի եւ Իմերեթիի տարածաշրջաններում անցկացրեց «Ուժեղ տարածաշրջաններ-ուժեղ Վրաստան» ծրագրի շնորհանդեսը:*

Տեղի գործարարների հետ հանդիպմանը, վարչապետը, ներկայացնելով միկրո եւ փոքր ձեռներեցության աջակցությամբ նախագիծը, հայտարարեց, որ Վրաստանն ի վիճակի է իրեն լրիվությամբ ապահովել գյուղատնտեսական մթերքներով: Վարչապետի խոսքերով, նոր նախագիծը ուղղված է գործարարություն սկսելու հարցում բնակչությանն աջակցության ցուցաբերմանը: «Տարածաշրջաններն ունեն զբոսաշրջության, գյուղատնտեսության տեղական արդյունաբերության զարգացման բացառիկ ռեսուրսներ: Վստահ եմ, որ նոր նախագիծը ազդակ կհաղորդի միկրո

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

## ՆՈՐ ՓՈՒԼ՝ ՎՐԱՑ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Ապրիլի 23-ին, երկօրյա պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն:*

Այցի շրջանակներում, Բելառուսի ղեկավարին ընդունեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, պաշտոնական այլ անձինք: Ալեքսանդր Լուկաշենկոն հանդիպում ունեցավ նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

Բելառուսի նախագահը ծաղկեպսակ դրեց Թբիլիսիի կենտրոնում գտնվող Հերոսների հրապարակում՝ Վրաստանի տարածքային ամբողջականության համար մղված մարտերում զոհվածների հուշահամալիրին:

Պաշտոնական այցի երկրորդ օրը Բելառուսի նախագահը ուղեւորվեց Բաթումի, որտեղ հանդիպում ունեցավ Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՇԵՑ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ



*2015 թվականի ապրիլի 24-ին, աշխարհի առաջադեմ մարդկության հետ միասին, Վրաստանի հայությունը եւս իր խոնարհումը բերեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների 100-րդ տարելիցին:*

Մարդկանց հոսքը դեպի Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցի սկսվեց դեռեւս վաղ առավոտյան՝ մասնակցելու եկեղեցում մատուցվող Հիշատակի Սուրբ պատարագին:

Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակի Սուրբ պատարագին ներկա էին Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը՝ տիկնոջ՝ էլեոնորա Վարդանյանի հետ, Վրաստանում Ավետարանական-Լյութերանական եկեղեցու առաջնորդ Հանս-Իոհաիմ եպիսկոպոս Կիդերլենը, Վրաստանի Ավետարանական-Մկրտական եկեղեցու հոգեւոր հայր Տեր Մալխազ եպիսկոպոս Գափրինդաշվիլին, մայրաքաղաքի հայ հասարակական գործիչներ, մտավորականներ, համայնքային կառույցների ղեկավարներ: Բազմություն, որ զբաղեցրել էր եկեղեցին եւ նրա մերձակա ողջ տարածքը:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

# ՆՈՐ ՓՈՒԼ՝ ՎՐԱՑ-ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հետ: Բացի այդ, Ալեքսանդր Լուկաշենկոն ներկա գտնվեց Բաթումիի եւ Բրեստի եղբայրացման մասին պայմանագրի ստորագրման արարողությանը:

Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում տեղի ունեցավ երկու երկրների ղեկավարների՝ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Ալեքսանդր Լուկաշենկոյի առանձնազրույցը:

Հանդիպման ավարտից հետո, տեղի ունեցավ համատեղ պամածայնագրերի ստորագրման արարողությունը:

Գիորգի Մարգվելաշվիլին եւ Ալեքսանդր Լուկաշենկոն հանդիպման արդյունքում ստորագրեցին համատեղ հայտարարություն:

Բաթումիում Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն հայտարարեց, որ Բելառուսը տարվա ընթացքում դեսպանություն կբացի Վրաստանում:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հանդիպմանը, կողմերը քննարկեցին երկկողմ առեւտրատնտեսական համագործակցության խորացման հետ առնչվող հարցեր: Վրաստանի վարչապետի եւ Բելառուսի նախագահի ներկայությամբ, երկու երկրների միջեւ ստորագրվեցին առեւտրատնտեսական ուղղությամբ մի շարք փաստաթղթեր:



Բելառուսի նախագահը Վրաստանի վարչապետին հրավիրեց պաշտոնական այցով լինել Բելառուսում: Հրավերը շնորհակալությամբ ընդունվեց:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ փոքր ձեռներեցության զարգացմանը»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, Վրաստանի մասշտաբով կֆինանսավորվի 3 հազար ձեռներեց, կստեղծվի շուրջ 4700 նոր աշխատատեղ:

Վարչապետը խոսեց նաեւ կառավարության կողմից երկրամասերում ակտիվության ապահովմանն ուղղված միջոցառումների մասին: «Գլխավոր խնդիր է առավելագույնս ակտիվացնել տարածաշրջաններում գործընթացները: Ապահովել տեղական իշխանության բնակչության ներգրավումը, հիմնել աշխատատեղեր, եւ մենք՝ ինչպես կենտրոնական իշխանությունը, այնպես էլ՝ տեղական մարմինները, պատրաստ ենք առավելագույնս աջակցել գործարարության զարգացմանը, առավելագույնս դյուրացնել այն ընթացակարգերը, որոնք կարող են արգելքներ հարուցել: Վրաստանի տարածաշրջաններում առկա է մեծ ներուժ եւ չօգտագործված հնարավորություն: Մենք չենք կարող թույլ տալ, որպեսզի տարածաշրջանների հնարավորությունները առավելագույնս չօգտագործվեն արդյունավետորեն եւ խելամիտ: Այդ հարցում, բնականաբար, կառավարությունը զգում է ձեր աջակցության կարիքը: Մենք համատեղ ջանքերով պետք է օգտագործենք այդ ներուժը, յուրացնենք հնարավորությունները»,- հայտարարեց վարչապետը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌՈՒՄՈՎ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՐՎՈՒՄ Է ՀԻՊՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ»



*Ինչպես հայտարարեց Վրաստանի էկոնոմիկայի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, կառավարությունը հնարավորինս անում է հիպոթեքային վարկ ունեցողների հիմնախնդրի հարցով, քեպետ կառավարությունն ի վիճակի չէ լուծել բոլոր հիմնախնդիրները: Մենք աշխատում ենք այդ հիմնախնդրի շուրջ:*

Արդարադատության նախարարությունը մեծ աշխատանքներ է իրականացրել, որպեսզի առավելագույնս օգնի այդ մարդկանց, նրանց տրվի լրացուցիչ ժամանակ իրենց բնակարանների ետգնման համար»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

Նրա խոսքերով, համապատասխան աշխատանք է իրականացվում նաեւ բանկային հատվածի կողմից: «Հարկ է նշել, որ հիմնախնդրի գլխավոր մասը կայանում է նրանում, որ վարկերը մեծ մասամբ մասնավոր բնույթ են կրում, եւ ցավոք այդ հարցում պետությունը ոչինչ չի կարող անել: Այն, ինչ մենք իրականացնում ենք օրենսդրական առումով, արդեն իսկ նշանակալից է»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Վրաստանի էկոնոմիկայի նախարարն անդրադարձավ նաեւ տնտեսական աճի կանխագծված ցուցանիշի նվազեցման հարցին: «Այսօր մենք վստահությամբ կարող ենք ասել, որ տնտեսական աճի ցուցանիշը պետք է նվազեցվի մինչեւ 2 տոկոսը: Թեպետ բյուջեի պարամետրերի հստակեցումը նպատակահարմար կլինի անցկացնել երկրորդ եռամսյակի վերջին»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին՝ մեկնաբանելով Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից Վրաստանի տնտեսական աճի կանխագծված ցուցանիշի 5-ից մինչեւ 2 տոկոս նվազեցնելու վերաբերյալ հայտարարությունը:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

# ՆՎԱԶԵՑՎՈՒՄ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱԳԾՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇԸ

*Արժույթի միջազգային հիմնադրամն ընթացիկ տարվա համար մինչեւ 2 տոկոս նվազեցնում է Վրաստանի տնտեսական աճի կանխագծված ցուցանիշը:*

Այն 3 տոկոսով զիջում է երկրի բյուջեով ծրագրված մակարդակին: Նշենք, որ 2015 թվականի առաջին երկու ամիսների տվյալներով, տնտեսական աճը կազմել է 2,7 տոկոս: Այդ մասին նշվեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրու ԱՄՆ կատարած աշխատանքային այցի շրջանակներում անցկացված հանդիպումներում: Վրաց նախարարն այնտեղ մասնակցեց Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի գարնանային հանդիպմանը: Այցի շրջանակներում, Նոդար Խադուրին հանդիպումներ ունեցավ վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի նախագահ Սում Չակրաբորտիի, Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր տնօրեն Մենո Շնելի, Համաշխարհային բանկի գործադիր տնօրեն Ֆրենկ Հեմսկերկի, պաշտոնական այլ անձանց հետ:



ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ԸՆԴԳԾՎԵՑ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



*Ապրիլի 22-ին Վրաստանի սփյուռքի պետնախարար Գելա Դումբաձեն պաշտոնական այցով գտնվում էր Հայաստանում:*

Այցի շրջանակներում, կայացավ Գելա Դումբաձեի հանդիպումը Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հետ:

Հանդիպմանը Հրանուշ Հակոբյանը ներկայացրեց Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը հիմնական սկզբունքները եւ այդ ուղղությամբ սփյուռքի նախարարության ծրագրերն ու կատարված աշխատանքները: Խոսվեց նաեւ այդ օրերին անցկացվող՝ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» հասարակական-քաղաքական գլոբալ համաժողովի շրջանակներում անցկացվող «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրները» գիտաժողովում քննարկվող հարցերի մասին:

Վրաստանի սփյուռքի պետնախարար Գելա Դումբաձեն ներկայացրեց իր ղեկավարած կառույցի գործառույթները, Վրաստանում՝ ամեն տարի Բաթումիում կազմակերպվող «Սփյուռքի օր» միջոցառումների բովանդակությունն ու նպատակները եւ Հայաստանի նախարարին հրավիրեց մասնակցելու այս տարի աշնանը կազմակերպվող վրացական սփյուռքի տնտեսական ֆորումին: Վրաստանի սփյուռքի հարցերով պետնախարարը կարեւորեց փորձի փոխանակումը, հետագա համագործակցությունը եւ համատեղ ծրագրերի իրականացումը:

Հանդիպմանը մասնակցում էր Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին:



ՃԱՊՈՆԻԱ

## ՎՐԱՍՏԱՆԸ ՎԵՐԱՆՎԱՆՎԵՑ «ՋՈՐՋԻԱ»

*Ճապոնիայի խորհրդարանի ստորին պալատը, Թբիլիսիի խնդրանքով, ապրիլի 14-ին ընդունեց օրենսդրական ուղղում, որը պաշտոնական փաստաթղթերում եւ ցուցանակներում «Վրաստան» անվանումը փոխում է «Ջորջիա» (Georgia): Որոշումը, ինչպես սպասվում է, ուժի մեջ կմտնի այս ամսվա ընթացքում: Այն դեռեւս պետք է հաստատվի խորհրդարանի վերին պալատում: Անվանումը փոխելու շուրջ պաշտոնական համաձայնությունը ձեռք է բերվել անցյալ տարվա հոկտեմբերին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու Տոկիո կատարած այցի ժամանակ:*

ՂԱԶԱԽՍՏԱՆ

## ՆՈՒՐՍՈՒԼԹԱՆ ՆԱԶԱՐԲԱԵՎԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ



*Ղազախստանի գործող նախագահ, «Նուր Օթան» («Հայրենիքի լույսը») կուսակցության առաջնորդ Նուրսուլթան Նազարբաեւը համոզիչ հաղթանակ է տարել արտահերթ նախագահական ընտրություններում՝ ստանալով ընտրողների քվեների 97,7 տոկոսը:*

*Ըստ երկրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների, գործող նախագահի մրցակիցների՝ կոմունիստ Թուրգուն Սիզդիկովի եւ ինքնաառաջադրված Աբելգազի Քուսայինովի օգտին քվեարկել է ընտրողների համապատասխանաբար՝ 1,6 եւ 0,7 տոկոսը:*

*Նազարբաեւի համար, որը Ղազախստանը գլխավորում է արդեն ավելի քան 25 տարի, ընտրազանգվածի պաշտպանության բարձր մակարդակն անսովոր բան չէ: 1991 թվականի առաջին համաժողովրդական ընտրություններում նա ստացել է քվեների 98,7 տոկոսը, 2005-ին՝ 91,15 տոկոսը: 2011 թվականին Նազարբաեւի քաղաքականությանը հավանություն էր տվել ընտրազանգվածի ավելի քան 95 տոկոսը:*

ՆԵՊԱԼ

## ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺ ՄԵԾԱԹԻՎ ԶՈՀԵՐՈՎ

*Ապրիլի 25-ին Նեպալում տեղի ունեցավ 7,9 մագնիտուդով առաջին երկրաշարժը: Դրա էպիկենտրոնը գտնվել է մայրաքաղաք Կատմանդուից 80 կիլոմետր հյուսիս-արեւմուտք ընկած շրջանում: Մոտ կես ժամ անց, 6,6 մագնիտուդով տեղի ունեցավ երկրորդ երկրաշարժը: Տարերքի օջախը գտնվում էր 10 կիլոմետր խորության վրա: Երկրաշարժի հետեւանքով զոհվել է ավելի քան 4350 եւ տուժել՝ ավելի քան 8000 մարդ:*

*7,9 մագնիտուդով առավել ավերիչ երկրաշարժից հետո, սեյսմոլոգները Նեպալում գրանցել են 3,5-ից մինչեւ 6,9 մագնիտուդով եւս առնվազն 50 հետցնցում:*

ԵՄԵՆ

## ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

*Եմենում ռազմական գործողությունների սկզբից զոհերի թիվը կազմել է 951, վիրավորների թիվը հասել է 3943-ի:*

*Ավելի վաղ, Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ արաբական դաշինքը հայտարարել էր Եմենում շիա ապստամբների դեմ «Վճռականության փոթորիկ» գործողությունների ավարտի մասին: Համաձայն հայտարարության, դրա փոխարեն սկսվում է նոր գործողություն «Հույսի վերականգնում» անվանմամբ, որի նպատակն է պաշտպանել Եմենի բնակիչներին, պայքարել ահաբեկչության դեմ եւ քաղաքական լուծում տալ Եմենի խնդիրներին:*

*Հայտարարությունից կարճ ժամանակ անց սակայն, Սաուդյան Արաբիան նոր հարվածներ է հասցրել Եմենին:*

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ
ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾԱՐԿՎԵՑ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ

*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւ ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին մասնակցեցին ՆԳ նախարարության օպերատիվ-տեխնիկական դեպարտամենտի, տեխնոլոգիական նորամուծությունների եւ ուսուցման կենտրոնի բացման արարողությանը:*



Կենտրոնի բացումը իրականացվել էր ԱՄՆ կառավարության ֆինանսավորմամբ: Կենտրոնը կոչված է ապահովելու միջուկային եւ ռադիացիայի չտարածման, միջազգային գործընթացներում Վրաստանի գործընկերային ակտիվացման, Վրաստանի հնարավորությունների զարգացման, երկրի մարդկային ու նյութական ռեսուրսների ուժեղացման հարցերով, Վրաստանի, ԱՄՆ-ի եւ Եվրամիության միջեւ եռակողմ համագործակցության խորացմանը:

Կենտրոնի բացմանը ներկա էր նաեւ Վրաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Նորլանդը:

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՆՈԴԱՐ ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆԱԽԱՐԱՐ, ԻՍԿ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Է.ԽՈԿՐԻՇՎԻԼԻՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ



*Ապրիլի 21-ին Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Դավիթ Շավլիաշվիլին պաշտոնաթողության խնդրանքով դիմեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն: Ապրիլի 28-ին նույն խնդրանքով վարչապետին դիմեց նաեւ Վրաստանի բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարար Էլգուջա Խոկրիշվիլին:*

Շավլիաշվիլու պաշտոնաթողությունը առնչում են նրա առողջական վիճակին, իսկ Խոկրիշվիլին իր դիմումը հիմնավորում է ընտանեկան վիճակով:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հայտարարությամբ, Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարարությունը կգլխավորի գերատեսչության ղեկավարի ներկայիս տեղակալ Նոդար Ջավախիշվիլին:

Նոդար Ջավախիշվիլին 1993-1998 թվականներին եղել է Վրաստանի ազգային բանկի նախագահը: 1999-2004 թվականներին եղել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր: Նախքան 2014 թվականի վերջին տարածքային զարգացման նախարարի տեղակալի պաշտոնում իր նշանակումը, զբաղեցրել է Cartu Bank բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնը, որի սեփականատերը միլիարդատեր, Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին է:

Նշենք, որ եթե միմյանց հաջորդած վերոնշյալ երկու պաշտոնաթողություններին հետեւի եւս մի նախարարի հրաժարականը, ապա, գործող սահմանադրության համաձայն, կբարձրացվի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորած կառավարության վստահության քվեի հարցը: Այդ դեպքում գործընթացին միջամտում է երկրի նախագահը, ով մեկշաբաթյա ժամկետում խորհրդարանի հաստատմանը պետք է ներկայացնի կառավարության նորացված կազմը: Թեպետ պետք է նշել, որ խորհրդարանում մեծամասնության ձայների նվազեցման պայմաններում նոր կառավարության հաստատումը դյուրին գործընթաց չէ, հետեւաբար, ինչպես գտնում են քաղաքագետները, փոփոխությունները կատարվում են ներգերատեսչական մակարդակներում:



ԿՐԹԱԿԱՆ



## ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆԿԸ

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը հրապարակել է առաջին դասարանցիների գրանցման ժամանակացանկը:*

Գրանցումը իրականացվելու է երեք փուլով: Առաջին փուլը կանցկացվի ապրիլի 23-ից մինչեւ մայիսի 4-ը: Գրանցումը կանցկացվի դպրոցներում, կգրանցվեն այն աշակերտները, ում քույրերը կամ եղբայրները սովորում են այդ դպրոցում, ում ծնողներն աշխատում են այդ դպրոցում, ինչպես նաեւ մի ընտանիքից երկու եւ ավելի աշակերտ ընդունվում է առաջին դասարան:

Առաջին փուլում, հանրակրթական ուսումնական հաստատություն աշակերտի ընդունման համար, անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը կիրականացվի մայիսի 5-13-ը: Գրանցման երկրորդ փուլը՝ էլեկտրոնային համընդհանուր գրանցումը կանցկացվի մայիսի 15-ից մինչեւ հունիսի 9-ը: Գրանցումը կիրականացվի կրթության կառավարման տեղեկատվական համակարգի կայք-էջում: Երկրորդ փուլում, հանրակրթական ուսումնական հաստատություն աշակերտի համար փաստաթղթերի ընդունումը կիրականացվի հունիսի 11-ից մինչեւ հունիսի 21-ը:

Այն դեպքում, եթե առաջին եւ երկրորդ փուլում աշակերտի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը չեն ներկայացվի, գրանցումն ավտոմատորեն վերացվում է:

Երրորդ փուլը ներառում է հունիսի 22-ից մինչեւ հուլիսի 11-ն ընկած ժամանակահատվածը:

Կրթության նախարար Թամար Սանիկիձեի խոսքերով, կգրանցվեն միայն այն աշակերտները, ում տարիքը համապատասխանում է օրենքով սահմանված պահանջներին:

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿԳՈՐԾԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ

*Վրաստանի կրթության փոխնախարար Լիա Գիգաուրու հավաստմամբ, երեխաների նախադպրոցական պատրաստման պիլոտային ծրագիրը Վրաստանում կգործի նոր ուսումնական տարում՝ սեպտեմբերի 14-ից:*

«Մենք սկսում ենք նախադպրոցական կրթության պիլոտային նոր ծրագիր, քանզի նախադպրոցական կրթություն մինչ այդ Վրաստանում չի իրականացվել»,- հայտարարեց Գիգաուրին: Նրա խոսքերով, նախադպրոցական կրթության ծրագիրն արդեն մշակվել է, եւ այն նախատեսված է 5-6 տարեկան երեխաների համար: Եթե անգամ երեխան մանկապարտեզ չի հաճախում, նա կարող է այդ ծրագրով անցնել նախապատրաստությունը»,- հայտարարեց Լիա Գիգաուրին:

Փոխնախարարի խոսքերով, նոր ծրագրի ներդրումը պայմանավորված է նրանով, որ 2015 թվականին առաջին դասարան կընդունվեն միայն այն երեխաները, ում վեց տարին լրացրել է, դպրոցներում պարապմունքների սկսելու պահի համար:

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՀՈՒԼԻՍԻ 2-ԻՆ

*Այս տարի Վրաստանում Միասնական ազգային քննությունները կմեկնարկեն հուլիսի 2-ին:*

Վրաստանի քննությունների ազգային կենտրոնը հրապարակել է միասնական քննությունների եւ մագիստրատուրայի քննությունների ժամանակացանկը:

Ըստ ժամանակացանկի, Միասնական ազգային քննությունները հուլիսի 2-ին կմեկնարկեն վրաց լեզվի ու գրականության քննությամբ եւ կավարտվեն հուլիսի 22-ին քիմիայի քննությամբ:

Մագիստրոսի թեկնածուների քննությունները կսկսեն հուլիսի 9-ից, իսկ դրամաշնորհներին հավակնող ուսանողների քննությունները՝ հուլիսի 20-ից:

Երկրի մասշտաբով, կգործի քննական 19 կենտրոն՝ Բաթումիում, Փոթիում, Օզուրգեթիում, Քութայիսիում, Ախալցիխեում, Գորիում, Թբիլիսիում, Ռուսթավիում, Թելավիում եւ Խուլոյում:

Նշենք, որ Միասնական ազգային քննությունների համար արդեն գրանցվել է ավելի քան 40 հազար դիմորդ, դրամաշնորհների համար գրանցված ուսանողների թիվը գերազանցում է 4 հազարը, իսկ մագիստրատուրայում սովորել ցանկացողների թիվը գերազանցել է 12500-ը:

Կրթական ծրագրում դիմորդները կարող են փոփոխություններ իրականացնել մինչեւ քննությունները մնացած ժամանակահատվածում:



### ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՐԻ ՀԵՏ

*Ապրիլի 27-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ երկրի տարածաշրջանների նահանգապետերի հետ: Հանդիպմանը նահանգապետերը վարչապետին տեղեկատվություն հաղորդեցին գյուղատնտեսության զարգացման աջակցության ծրագրի շրջանակներում տեղերում իրականացվող գարնան-դաշտային աշխատանքների ընթացքի մասին: Հանդիպմանը քննարկվեց նաեւ զբոսաշրջական սեզոնի նախապատրաստության ընթացքը:*

### 1000-ԱԿԱՆ ԼԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ

*Ի նշանավորումն Մեծ հաղթանակի 70-ամյակի, Երկրորդ աշխարհամարտի վետերանները կառավարությունից կստանան 1000-ական լարի: Սույն նախաձեռնությամբ հանդես է եկել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Ներկա դրությամբ, Վրաստանում ապրում է պատերազմի 1800 վետերան եւ խնամակալին կորցրած 500 անձնավորություն, որոնք կստանան կառավարության կողմից նշանակված միանշանակ օգնությունը:*

### ՍԿՍՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԻԾ

*Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը եւ գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD) սկսում են «Գյուղատնտեսության արդիականացում, շուկաների մատչելիություն եւ ճկունություն) համատեղ նախագիծը: Նախագծի շնորհանդեսն անցկացվեց Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցում: Միջոցառումը, որին մասնակցում էին գյուղատնտեսության նախարարության դոնոր եւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները, ագրարային հատվածի ֆերմերներն ու ձեռներեցները, բացեց Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան:*

*Նոր նախագծի նպատակն է աջակցել գյուղի բնակչության եկամտի ավելացմանն ու, հետեւաբար, աղքատության հաղթահարմանը:*

*Նախագծի հիմնական ուղղություններն են գյուղական ենթակառույցների բարելավումը, ներքին ոռոգման համակարգերի վերանորոգումը, գյուղատնտեսությունում նոր տեխնոլոգիաների ներդրման, գյուղատնտեսական մթերքների իրացման աջակցությունը:*

*Նախարարը Վրաստանում իրականացված մի շարք նախագծերի կապակցությամբ, շնորհակալություն հայտնեց Վրաստանում IFAD-ի նախագծերի ղեկավար Դին Նաբիլին:*

### ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ

*Ապրիլի 23-ին Վրաստանի երիտասարդության եւ սպորտի գործերով նախարար Լեւան Ղիփիանին Ախալցիխեում մասնակցեց աշակերտական օլիմպիադայի «Ուրախ մեկնարկներ» Ախալցիխեի տարածաշրջանային մասնաճյուղի միջոցառմանը, պարգեւատրեց մրցույթի հաղթողներին:*

*Պարգեւատրման արարողությունից հետո, նախարարը տեղի տեկվանդոյի, ձյուդոյի եւ ֆուտբոլի խմբակներին հանձնեց մարզագույք:*

### ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԶՈՀՎԵՑ ԵՎՍ ՄԵԿ ՎՐԱՑԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ

*Ուկրաինայում զոհվել է եւս մի վրաց զինվորական, որը կռվում էր ուկրաինական իշխանությունների կողմից: Ինչպես տեղեկացրել են ԶԼՄ-ները, Գիորգի Ջանելիձեն զոհվել է Լուգանսկի մարզի Շիրոկինո գյուղի մոտ ռազմական գործողության ընթացքում: Նշենք, որ Գիորգի Ջանելիձեն երրորդ վրաց զինվորականն է, որը զոհվել է Ուկրաինայում մարտերի ժամանակ: Զոհված վրաց զինվորականի դին տեղափոխեցին Վրաստան եւ հուղարկավորեցին Թբիլիսիի Մուխատգվերդիի զինվորական գերեզմանատանը:*

# ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Երկարատեւ ընդմիջումից հետո, Ցեղասպանության նահատակների սրբադասման միջոցով, վերականգնվեց Հայ եկեղեցու սրբադասման կարգը:*



Ապրիլի 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Բաց խորանում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողություն, որի ժամանակ Ցեղասպանության նահատակները հռչակվել են Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու սրբեր՝ հիմնվելով հայոց եկեղեցական ավանդության, եպիսկոպոսաց ժողովի կայացրած որոշման վրա եւ օրհնությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինի:

... Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցում սրբերի հիշատակության ավանդությունն սկսվում է 4-րդ դարից: Ըստ հայ պատմիչ Ագաթանգեղոսի, հայոց առաջին կաթողիկոս Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, համաձայն քրիստոնեական ավանդության, Հայաստանում նահատակված Հռիփսիմյանց եւ Գայանյանց կույսերի գերեզմանների վրա կառուցել է հատուկ մատուռներ: Այսօր Հայ եկեղեցու սրբերի թիվը շուրջ 700 է, իսկ ըստ Տոնացույցի տոնելի սրբերի թիվը հասնում է 400-ի: Հիշատակելի սրբերի հնագույն խումբն Աստվածաշնչյան սրբերն են (նահապետներ, մարգարեներ, առաքյալներ): Մյուս տոնելի խումբը համաքրիստոնեական սրբերն են, որոնց ընդհանուր թիվը կազմում է 189: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին ցայսօր անփոփոխ կերպով տոնակատարում է 63 հայ սրբերի հիշատակը:

Հայ եկեղեցու ամենահայտնի սրբերից են առաջին կաթողիկոս Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, ով նաեւ համաքրիստոնեական սուրբ է համարվում, 5-րդ դարում հանուն հավատքի ու հայրենիքի նահատակված Սուրբ Վարդանանք, Սուրբ Գրիգոր Նարեկացին (10-րդ դար), Սուրբ Ներսես Շնորհալի կաթողիկոսը (12-րդ դար) եւ այլք:

*Սրբադասման ծիսական արարողությանը, այլ բարձրաստիճան հոգեւորականների հետ միասին, իր մասնակցությունը բերեց նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ով կրում էր Կիլիկիայի Սկեւռայի վանքի մասունքատուփը:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԱՆԳԵՐ՝ Ի ՆՇԱՆԱՎՈՐՈՒՄՆ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ



Հայաստանում եւ աշխարհասփյուռ համայնքներում Հայ Առաքելական եկեղեցիներում, ինչպես նաեւ քույր եկեղեցիներում ապրիլի 23-ին՝ ժամը 19:15-ին, հնչեցին զանգերի 100 ղողանջները: Այնուհետեւ անցկացվեց լռության մեկ րոպե:

Խորհրդանշական այս արարողությունը հաջորդեց Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման արարողությանը: Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակի օր հռչակվեց ապրիլի 24-ը՝ ի «Յիշատակ սրբոց նահատակաց, որք կատարեցան յընթացս ցեղասպանութեան Հայոց վասն հավատոյ եւ վասն հայրենեաց»: Հայոց ցեղասպանության նահատակները, որոնք ընկան վասնո հավատո եւ վասն հայրենյաց, հռչակվեցին սրբեր: Ապրիլի 24-ին օծված սրբապատկերը երկրպագության կդրվի Ծիծեռնակաբերդում:

# 2015 ԹՎԱԿԱՆ ԱՊՐԻԼԻ 24. ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ԲԱՐՁՈՒՆՔՈՒՄ ՈԳԵԿՈՉԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բուլոյի նախագահներ Համլետ Մովսիսյանը եւ Սմբատ Կյուրեղյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, «Հայարտուն» մշակութային կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանը:

Հայաստանի նախագահի, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանն ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի օրը, Հայաստան ժամանած բազմաթիվ բարձրաստիճան պատվիրակությունների եւ պետությունների ղեկավարների հետ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, մասնակցեց Ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակի արարողությանը: Սերժ Սարգսյանը հանդես եկավ ելույթով:

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՎԵՐՔՆ ԱՐՅՈՒՆԱԶՈՍՈՒՄ Է, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՇԱՏ ԵՆ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ, ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»




Իր խոսքում Հայաստանի նախագահը, մասնավորապես, նշեց. «Այսօր մենք Ծիծեռնակաբերդի բարձունքում ոգեկոչում ենք Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Հարյուր տարի առաջ այս օրը՝ ապրիլի 24-ին, Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսում եւ կայսրության այլ քաղաքներում հայ մտավորականների զանգվածային ձերբակալություններով սկսվեց լայնորեն իրականացվել 20-րդ դարի մեծագույն հանցագործություններից մեկը: Դրան նախորդել էին հայ զինվորականների զինաթափումն ու կոտորածը: Այն, ինչ կատարվեց 1915 թվականին եւ շարունակվեց հաջորդ տարիներին, աննախադեպ էր իր ծավալներով ու հետեւանքներով:

Հայ ժողովրդի արեւմտյան հատվածը, որ հազարամյակներով ապրել էր իր տանը, իր բնօրրանում, իր հայրենիքում, տեղահանվեց եւ բնաջնջվեց համաձայն պետականորեն մշակված ծրագրի՝ բանակի, ոստիկանության, այլ պետական կառույցների եւ հատուկ այդ նպատակով բանտերից ազատ արձակված հանցագործներից կազմված հրոսակախմբերի անմիջական մասնակցությամբ»,- նշեց Սերժ Սարգսյանը:

Հայաստանի նախագահը իր խոսքում նշեց, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը դարձել է նման հանցագործությունների դեմ միջազգային պայքարի մի նոր հանգրվան: «Միայն վերջին շրջանում աշխարհի տարբեր երկրներ եւ միջազգային կառուցներ ճանաչեցին 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Որոշները վերահաստատեցին այն, որոշ երկրներ էլ քրեականացրին ցեղասպանությունը ժխտելու փորձերը՝ մեկ համոզմունքով. դա է համաշխարհային պատմության մութ էջերը լուսավորելու եւ նման էջեր այլեւս չգրելու միակ ուղին»,- ասաց Հայաստանի նախագահը:

«Ցեղասպանության ճանաչումը աշխարհի տուրքը չէ հայ ժողովրդին ու նրա զոհերին: Ցեղասպանության ճանաչումը մարդկային խղճի եւ արդարության հաղթանակն է անհանդուրժողականության ու ատելության հանդեպ»,- հայտարարեց Սերժ Սարգսյանը եւ հավելեց. «Ուստի, համայն հայության անունից շնորհակալ եմ Ձեզ, նախագա'հ Անաստասիադիս, նախագա'հ Նիկոլիչ, նախագա'հ Օլանդ, նախագա'հ Պուտին, շնորհակալ եմ միջազգային ողջ հանրությանը՝ ի դեմս այստեղ ներկայացված պետությունների եւ միջազգային կազմակերպությունների, բոլոր նրանց, ովքեր մեր կողքին են, բոլոր նրանց, ովքեր կուզենային մեր կողքին լինել: Մենք շնորհակալ ենք աշխարհի երկրների քաղաքացիական հասարակություններին ու միջազգային մամուլի ներկայացուցիչներին, որոնք բարձրաձայնել եւ բարձրաձայնում են Հայոց ցեղասպանության ճանաչման կարեւորությունը: Շնորհակալ ենք այս տարի աշխարհով մեկ անցնող միջոցառումների ընթացքում հայ ժողովրդի կողքին կանգնած՝ բարի կամքի տեր բոլոր մարդկանց: Շնորհակալ ենք այսօր Ստամբուլի Թաքսիմ հրապարակում հավաքվածներին. նրանք ուժեղ մարդիկ են եւ ճիշտ գործ են անում իրենց հայրենիքի համար:

Հայ ժողովուրդը այսուհետ եւս մշտապես կանգնելու է նրանց կողքին, ովքեր տառապել են մարդկության դեմ գործած հանցագործություններից: Ցեղասպանությունների դեմ միջազգային անզիջում պայքարը մեր արտաքին քաղաքականության անբաժանելի մասն է լինելու:

Շնորհակալ եմ բոլորիդ, որ այստեղ եք՝ վերահաստատելու ձեր հանձնառությունը համամարդկային արժեքներին, ասելու, որ ոչինչ չի մոռացվել, ասելու, որ հարյուր տարի հետո էլ հիշում ենք եւ պահանջում»:

Ապա ելույթներ ունեցան Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիադիսը, Սերբիայի նախագահ Տոմիսլավ Նիկոլիչը եւ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը:

### ՖՐԱՆՍՈՒԱ ՕԼԱՆԴ. «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱԿՏ Է»

Ոգեկոչել Հայոց ցեղասպանությունը՝ նշանակում է ընդունել ողբերգությունը, որն իր ողջ ծավալով հարվածել է մարդկությանը, ոգեկոչել՝ նշանակում է թույլ չտալ, որ վերստին տեղի ունենան այլ ոճրագործություններ: Հենց այդ պատճառով էլ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչումը Ֆրանսիայի համար պարտավորություն է՝ հիշողության տուրք մատուցելու զոհերի հիշատակին, միեւնույն ժամանակ այդ հիշողությունը փոխանցելու հետագա սերունդներին:

«Այսօր, գտնվելով Երեւանում, մենք մեր ներդրումն ենք բերում հաշտեցմանը, քանի որ հիշողությունը չպետք է օգտագործվի մասնատելու, բաժանելու, հակառակը՝ այն պետք է ներդրվի միավորելու համար: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նվիրված է խաղաղությանը, առաջընթացին, Հայաստանի, տարածաշրջանի եւ ողջ աշխարհի համար:

### ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿԻՍՈՒՄ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՇՏԸ»

«Միջազգային հանրությունը պարտավոր է ամեն ինչ անել, որպեսզի անցյալի ողբերգական իրադարձությունները երբեւէ չկրկնվեն»,- ասաց Վ.Պուտինը:

ՌԴ նախագահը շեշտեց, որ Ռուսաստանը կիսում է մարդկության պատմության ամենասարսափելի ողբերգություններից մեկը վերապրած հայ ժողովրդի վիշտը:

Պուտինը նաեւ անդրադարձավ հայ-ռուսական հարաբերություններին՝ ընդգծելով, որ Ռուսաստանի եւ Հայաստանի եղբայրական ժողովուրդների հարաբերությունները մշտապես առանձնացել են հոգեւոր մտերմությամբ ու փոխադարձ օգնության պատրաստակամությամբ: «Այդպես եղել է ե'ւ 100-ամյա վաղեմության ողբերգական իրադարձությունների, ե'ւ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, ե'ւ Սպիտակի ավերիչ երկրաշարժի ժամանակ»,- նշեց Պուտինը:

### ՆԻԿՈՍ ԱՆԱՍՏԱՍԻԱԴԻՍ. «ԿԵՆԴԱՆԻ ՊԱՀԵԼ ԱՅՍ ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ ԱՐԱՐՔԻ ՀԻՇԱՏԱԿԸ»

«Մենք այստեղ ենք շատ առաջատար գործիչների հետ հայ ժողովրդի հետ միասին մասնակցելու Մեծ եղեռնի 100-ամյակի ոգեկոչմանը, եւ բնական է, որ Կիպրոսն ու Հայաստանը միաժամանակ են դատապարտում ցեղասպանության ոճրագործներին»,- իր ելույթում ասաց Ն.Անաստասիադիսը:

Նրա խոսքերով, Կիպրոսը առաջին պետություններից էր, որ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Ըստ նրա, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման արարողությանը յուրաքանչյուրի մասնակցությունը նպատակ է հետապնդում կենդանի պահել այս աննկարագրելի արարքի հիշատակը, հարգանքի տուրք մատուցել միլիոնավոր նահատակներին, ովքեր կյանքից զրկվեցին 100 տարի առաջ:

Կիպրոսցիները հպարտ են այն փաստով, որ այս փախստականների թոռներն ու երեխաները այսօր Կիպրոսի հասարակության կարեւոր եւ աշխույժ անդամներն են, ովքեր իրենց ծագումը պահպանում են ու պաշտպանում արժանապատվորեն:

### ՏՈՄԻՍԼԱՎ ՆԻԿՈԼԻՉ. «ԵԿԵՔ ՄԱՐԴ ԼԻՆԵՆՔ...»

Տոմիսլավ Նիկոլիչը իր ելույթում ասաց, որ եկել է Երեւան իր պետության եւ սերբ ժողովրդի անունից հարգանքի տուրք մատուցելու 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից իրականացված «ահավոր ողբերգության զոհերի հիշատակին»:

«Հայերի հետ տեղի ունեցած դաժան իրադարձությունները հասկացող եթե մեկ ժողովուրդ կա, դա սերբ ժողովուրդն է»,- հայտարարեց նախագահը ու նշեց, որ 1915-1918 թթ. մեծ պատերազմում ոչ մի երկիր այնքան կորուստներ չի կրել, որքան Սերբիան:

Տոմիսլավ Նիկոլիչն իր ելույթը եզրափակեց՝ մեջբերելով սերբ պատրիարք Պավելի խոսքերը. «եկեք մարդ լինենք»: «Եթե կա մի ուղերձ՝ այս ուղերձը պետք է հնչեցնել նաեւ հայոց զոհերի նկատմամբ»,- եզրափակեց նա:

### ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ, ՍԵՐ, ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ»

Նվիրական եւ պատմական օր է այսօր: 100-րդ տարելիցն է Հայոց ցեղասպանության: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում վերստին համախմբվել ենք ոգեկոչելու մեր սուրբ նահատակների հիշատակը:

Հոգեւոր մխիթարություն է հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի ու մեզ համար, որ բյուրավոր մեր նահատակների հիշատակի արարողությանը ձեր ազնիվ մասնակցությունն եք բերում, պատվարժան նախագահներ բարեկամ պետությունների, սիրեցյալ հոգեւոր պետեր եւ սպասավորներ քույր եկեղեցիների, պետական, հասարակական եւ միջեկեղեցական կառույցների բարձրապատիվ ներկայացուցիչներ: Մեր երախտագիտությունն ենք հայտնում ձեզ եւ ձեր երկրների ժողովուրդներին ու իշխանություններին մեր ժողովրդի հանդեպ դրսեւորած հարգանքի համար:

Օսմանյան Թուրքիայի կողմից 20-րդ դարասկզբին իրագործված Հայոց ցեղասպանությունը մեր նորագույն պատմության մեծագույն ողբերգությունն է, որը համարժեք գնահատական եւ դատապարտություն չստանալով՝ նախադեպ դարձավ նոր ոճրագործությունների...